№ 15 Յունվարի 29 Հաբաթ 1883 Յունվարի 29 Հաբաթ № 15

ՏԱՍՆԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլ, կէս տարվանը 6 ռուբլ։
Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшакъ»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Երևանից։ Նամակ Նուխուց։ Ներքին լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ Նամակ Թիւրքիայից։ Արտաքին լուրեր։— ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Խաչագողի յիշատակարան։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

—

Յունվարի 24-ին

Յունվարի 7-ին մի քանի թատրոնասէրներ ներկայացրին «Վահան Մամիկոնեան» ողբերգութիւնը, և «Երկք քաջեր» վոդեվիլը։ Ներկայացումը չատ վատ անցաւ և միշտ այդպէս կը լինի, քանի որ մեր պ. պ. թատրոնասէրները, թատրոնի վրա կը նայեն իբրև փող աշխատելու գործի վրա։ Զարմանալի բան է, որ թատրոնական գործին անծանօթ ուսանողներ բեմ են դուրս գալիս և կորցնում են իսպառ նրա նշանակութիւնը։ Ներկայացումն յօգուտ Մարզարանի էր։ Այդ գործին աջակցում էր գլխաւորապէս պ. բժ. Տիգրանեանցը։ Ամենքը ուրախ են օգնելու բարի գործին, բայց պէտք չէ, որ մէկ բարի գործի պատճառով, միւս գործը վնասվի. խօսքս թատրոնի նշանակութեան վրա է։

Յունվարի 9-ին Երևանի Գայանեան օրիորդական դպրոցում կայացաւ Թիֆլիսի հայոց Բարեգործական ընկերութեան Երևանի վարչութեան նիստը։ Նիստը չատ անկարգ և անկանոն էր. չէր նկատվում նախագահի ներկայութիւն։ Ամեն մի հասարակ բանի համար քուէարկութիւն էր լինում։ Վարչութեան նպատակներից մէկն էր գրքեր հրատարակել, ըստ չափու կարողութեան. մի քանի պարոններ, արդէն քուէարկած և չատերից ընդունված հարցը ծռմռեցին, որովհետև իրանց քմքին հակառակ էր և խառնեցին ժողովը։ Այսպիսի բարիշնական խառնակութիւն տեսնելով վարչութեան խորհրդի նախագահը թողեց ժողովը, որին և չատերը հետևեցին, որոնց հետ էր նոյն իսկ տողերիս գրողը։ Միւս օրը լսում ենք, որ մնացած պարոնները, գրքք հրատարակելու վճռած հարցը քուէարկել են երկրորդ անգամ մեծամասնութեամբ ձայնից, այնպէս որ բոլոր քուէարկողները 40-ից աւել են եղել, այն ինչ, երբ դեռ չէին հեռացել խորհրդի նախագահը և միւս անդամները, քառասուն հոգի էին։ Զարմանում ենք թէ ինչպէս մօտ 15 հոգի հեռանալով, դարձեալ այն դիմեական արկղի մէջ երևացել են քառասունից աւել քուէներ։

Երևանում պատերի վրա կպած էին ափիշներ, որոնք յայտնում էին թէ՝ Վաղարշապատի թատերասիրաց խումբը ամսիս 10-ին ներկայացնելու է Երևանի Գայանեան օրիորդաց դպրոցի դահլիճում «Արշակ Բ.» ողբերգութիւնը, և «Սուտ ճրագնաւոր» վոդեվիլ 1 արարուածով։ Վաղարշապատից ամսիս 9-ին եկան թատերասէրները, որոնք թուով 10 հոգի էին և սկսեցին քաղաքիս մէջ տարածել իրանց տոմսակները։ Ամբողջ օրը ժողովեցին մօտ 50 ռուբլի արդիւնք, որի սակաւութեան պատճառով, երեի դադարեցրին յիշեալ ներկայացումը մի համառօտ յայտարարութեամբ։ Թէ ինչու ներկայացումն չաջողեցաւ, թող այդ պ. պ. թատերասէրները բացատրեն, իսկ մենք զարմանում ենք թէ ինչու այդ պարոնները մրջիւնների նման կէնտ կէնտ քաշվեցին Երևանից, անյայտ ձեռքերում թողնելով մինչև անգամ ստացված փողերը։ Տոմսակ գնողները համաձայն թատերասիրաց վերջին յայտարարութեան, չը գիտեն թէ ումից պէտք է յետ ստանան փողերը։ Երևանցիքս կը խնդրէինք հաւաքված փողերը վերադարձնել ըստ պատկանելոյն։

Նկատող

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

Յունվարի 22-ին

Դեկտեմբերի վերջին սկսած չարունակ եկող ձիւնը, չը նայելով որ մի կողմից հալվում է, դեռ այսօր էլ ծածկած պահում է շրջակայ դաշտերն ու սարերը։ Գիւղացիք բերքերի առատութիւն են զուշակում. նրանք երկիւղ են կրում միմիայն տեղ տեղ երևացող մկներից։ Երկրագործի այդ վատնդաւոր թշնամիքը վերջին ժամանակներս երևացել են Բլեղ և Բեղլարքանդ հայ գիւղերի կողմերը։

Մեր քաղաքում գողութիւններն սկսել են յաճախ կրկնվել։ Հայոց թաղումը գողերը չորս անգամ մտան տները և տարան ցորեն, ամանեղէններ, չորեր և զանազան ուտելու պաշարներ։ Այդ դէպքերից առաջ մի աղքատ մարդու տունը երկու անգամ կողոպտեցին գողերը. առաջին անգամը մնդուվից հանելով, տարան չորեր, քիչ փող և տան աղամարդի զէնքերը, իսկ երկրորդ անգամը տարան նրանց ամբողջ ձմեռվայ պաշարը—ցորեն, դարի և ամանեղէնները։ Այս երկրորդ անգամը բարեբաղդաբար գետինը թաց էր և երբ տանտիկինն արթնանալով տեսնում է, որ տունը կողոպտված է, բարձր ձայնով օգնութեան է կանչում։ Հարևաններից երկու կտրիչ եղբայրներ գողերի հետքով գնում են Թուրքերի թաղը՝ մինչև մի նշանաւոր գողի տան առաջը. այս հանգամանքը յայտնում և հետքը ցոյց են տալիս տեղական պրիստաւին, նրա օգնականին և քաղաքային դիշերապահներին, որոնք բոլորն էլ Թուրքեր են։ Նրանք խոստանում են անպատճառ գտնել այդ ապրանքները, վերադարձնել տիրոջը և պատժել գողերին, բայց մինչև այսօր խեղճ ընտանիքի ունեցածը չեն վերադարձրել, այդ պատճառով էլ նրա բազմաթիւ մանր երեխաներից բաղկացած անդամները անօթի են մնացել։ Նշանաւորն այն է, որ ոչ վերև յիշված գողերի տեղն է յայտնվում և ոչ տարած իրեղէններն են գտնվում։

Մի քանի օր առաջ մի դէպք էլ պատահեցաւ։ Գողերը ցանկանալով կողոպտել մի տուն, որի տղամարդն ուրիշ քաղաք էր գնացել, մտնում են բաղը և աշխատում են բռնութեամբ կոտրել տան դռները և ներս մտնել։ Այդ ձայնը լսում է նրանց տնկէցը և, քաջալերական խօսքեր ասելով, կամենում է օգնութեան հասնել սարսափահար եղած տանտիկնոջը։ Զարազործները՝ այս անակնկալ հանդամանքից չփոթվելով, ասում են իրանց մի ընկերին. «Ինչու մեզ խաբեցիր, թէ՝ այստեղ տղամարդ չը կայ»։ Ինչպէս երևում է, նրանք չեն իմացել, որ այդ տան մի սենեակում վարձով բնակվող կայ։ Այդ միջոցին նրանք՝ մի ատրճանակ արձակելով օգնութեան հասնող մարդու վրա, մտադրվում են փախչել. բայց տնկէցը հրացանի հարուածով վիրաւորում է նրանցից մէկին թիկունքից։ Հրացանի ձայնին հաւաքվում են հարևանները, արիւնի հետքը տանում է բաւական տեղ և յետոյ յանկարծ այլ ևս արիւն չէ երևում։ Երևում է, որ հետքը կորցնելու համար, վիրաւորվածի ընկերները վերքը կապել և փախցրել են նրան։ Մի քանի տեղ խուզարկութիւններ են լինում, բայց դեռ մինչև այսօր ոչ վիրաւորվածը գտնվեցաւ և ոչ նրա ընկերները։ Այսպէս՝ գողութիւնները սովորական երևոյթ են դարձել մեր քաղաքում և դրանց առաջն առնելու համար՝ հրաւիրում ենք պ. պ. պրիստաւների ուշադրութիւնը։ Առ այժմ պէտք է սաստկացնել դիշերապահների հսկողութիւնը, թէև դրանով էլ անկարելի է ոչնչացնել մի արմատացած չարիք, ինչպէս է գողութիւնը։

Մեր քաղաքի աղքատութեան մօտ մէկ երրորդ հրատարակել, ըստ չափու կարողութեան. մի քանի պարոններ, արդէն քուէարկած և չատերից ընդունված հարցը ծռմռեցին, որովհետև իրանց քմքին հակառակ էր և խառնեցին ժողովը։ Այսպիսի բարիշնական խառնակութիւն տեսնելով վարչութեան խորհրդի նախագահը թողեց ժողովը, որին և չատերը հետևեցին, որոնց հետ էր նոյն իսկ տողերիս գրողը։ Միւս օրը լսում ենք, որ մնացած պարոնները, գրքք հրատարակելու վճռած հարցը քուէարկել են երկրորդ անգամ մեծամասնութեամբ ձայնից, այնպէս որ բոլոր քուէարկողները 40-ից աւել են եղել, այն ինչ, երբ դեռ չէին հեռացել խորհրդի նախագահը և միւս անդամները, քառասուն հոգի էին։ Զարմանում ենք թէ ինչպէս մօտ 15 հոգի հեռանալով, դարձեալ այն դիմեական արկղի մէջ երևացել են քառասունից աւել քուէներ։

Երևանում պատերի վրա կպած էին ափիշներ, որոնք յայտնում էին թէ՝ Վաղարշապատի թատերասիրաց խումբը ամսիս 10-ին ներկայացնելու է Երևանի Գայանեան օրիորդաց դպրոցի դահլիճում «Արշակ Բ.» ողբերգութիւնը, և «Սուտ ճրագնաւոր» վոդեվիլ 1 արարուածով։ Վաղարշապատից ամսիս 9-ին եկան թատերասէրները, որոնք թուով 10 հոգի էին և սկսեցին քաղաքիս մէջ տարածել իրանց տոմսակները։ Ամբողջ օրը ժողովեցին մօտ 50 ռուբլի արդիւնք, որի սակաւութեան պատճառով, երեի դադարեցրին յիշեալ ներկայացումը մի համառօտ յայտարարութեամբ։ Թէ ինչու ներկայացումն չաջողեցաւ, թող այդ պ. պ. թատերասէրները բացատրեն, իսկ մենք զարմանում ենք թէ ինչու այդ պարոնները մրջիւնների նման կէնտ կէնտ քաշվեցին Երևանից, անյայտ ձեռքերում թողնելով մինչև անգամ ստացված փողերը։ Տոմսակ գնողները համաձայն թատերասիրաց վերջին յայտարարութեան, չը գիտեն թէ ումից պէտք է յետ ստանան փողերը։ Երևանցիքս կը խնդրէինք հաւաքված փողերը վերադարձնել ըստ պատկանելոյն։

Նկատող

ՆԱՄԱԿ ՆՈՒԽՈՒՑ

—

Յունվարի 22-ին

Դեկտեմբերի վերջին սկսած չարունակ եկող ձիւնը, չը նայելով որ մի կողմից հալվում է, դեռ այսօր էլ ծածկած պահում է շրջակայ դաշտերն ու սարերը։ Գիւղացիք բերքերի առատութիւն են զուշակում. նրանք երկիւղ են կրում միմիայն տեղ տեղ երևացող մկներից։ Երկրագործի այդ վատնդաւոր թշնամիքը վերջին ժամանակներս երևացել են Բլեղ և Բեղլարքանդ հայ գիւղերի կողմերը։

Մեր քաղաքում գողութիւններն սկսել են յաճախ կրկնվել։ Հայոց թաղումը գողերը չորս անգամ մտան տները և տարան ցորեն, ամանեղէններ, չորեր և զանազան ուտելու պաշարներ։ Այդ դէպքերից առաջ մի աղքատ մարդու տունը երկու անգամ կողոպտեցին գողերը. առաջին անգամը մնդուվից հանելով, տարան չորեր, քիչ փող և տան աղամարդի զէնքերը, իսկ երկրորդ անգամը տարան նրանց ամբողջ ձմեռվայ պաշարը—ցորեն, դարի և ամանեղէնները։ Այս երկրորդ անգամը բարեբաղդաբար գետինը թաց էր և երբ տանտիկինն արթնանալով տեսնում է, որ տունը կողոպտված է, բարձր ձայնով օգնութեան է կանչում։ Հարևաններից երկու կտրիչ եղբայրներ գողերի հետքով գնում են Թուրքերի թաղը՝ մինչև մի նշանաւոր գողի տան առաջը. այս հանգամանքը յայտնում և հետքը ցոյց են տալիս տեղական պրիստաւին, նրա օգնականին և քաղաքային դիշերապահներին, որոնք բոլորն էլ Թուրքեր են։ Նրանք խոստանում են անպատճառ գտնել այդ ապրանքները, վերադարձնել տիրոջը և պատժել գողերին, բայց մինչև այսօր խեղճ ընտանիքի ունեցածը չեն վերադարձրել, այդ պատճառով էլ նրա բազմաթիւ մանր երեխաներից բաղկացած անդամները անօթի են մնացել։ Նշանաւորն այն է, որ ոչ վերև յիշված գողերի տեղն է յայտնվում և ոչ տարած իրեղէններն են գտնվում։

Մի քանի օր առաջ մի դէպք էլ պատահեցաւ։ Գողերը ցանկանալով կողոպտել մի տուն, որի տղամարդն ուրիշ քաղաք էր գնացել, մտնում են բաղը և աշխատում են բռնութեամբ կոտրել տան դռները և ներս մտնել։ Այդ ձայնը լսում է նրանց տնկէցը և, քաջալերական խօսքեր ասելով, կամենում է օգնութեան հասնել սարսափահար եղած տանտիկնոջը։ Զարազործները՝ այս անակնկալ հանդամանքից չփոթվելով, ասում են իրանց մի ընկերին. «Ինչու մեզ խաբեցիր, թէ՝ այստեղ տղամարդ չը կայ»։ Ինչպէս երևում է նրանք չեն իմացել, որ այդ տան մի սենեակում վարձով բնակվող կայ։ Այդ միջոցին նրանք՝ մի ատրճանակ արձակելով օգնութեան հասնող մարդու վրա, մտադրվում են փախչել. բայց տնկէցը հրացանի հարուածով վիրաւորում է նրանցից մէկին թիկունքից։ Հրացանի ձայնին հաւաքվում են հարևանները, արիւնի հետքը տանում է բաւական տեղ և յետոյ յանկարծ այլ ևս արիւն չէ երևում։ Երևում է, որ հետքը կորցնելու համար, վիրաւորվածի ընկերները վերքը կապել և փախցրել են նրան։ Մի քանի տեղ խուզարկութիւններ են լինում, բայց դեռ մինչև այսօր ոչ վիրաւորվածը գտնվեցաւ և ոչ նրա ընկերները։ Այսպէս՝ գողութիւնները սովորական երևոյթ են դարձել մեր քաղաքում և դրանց առաջն առնելու համար՝ հրաւիրում ենք պ. պ. պրիստաւների ուշադրութիւնը։ Առ այժմ պէտք է սաստկացնել դիշերապահների հսկողութիւնը, թէև դրանով էլ անկարելի է ոչնչացնել մի արմատացած չարիք, ինչպէս է գողութիւնը։

Մեր քաղաքի աղքատութեան մօտ մէկ երրորդ հրատարակել, ըստ չափու կարողութեան. մի քանի պարոններ, արդէն քուէարկած և չատերից ընդունված հարցը ծռմռեցին, որովհետև իրանց քմքին հակառակ էր և խառնեցին ժողովը։ Այսպիսի բարիշնական խառնակութիւն տեսնելով վարչութեան խորհրդի նախագահը թողեց ժողովը, որին և չատերը հետևեցին, որոնց հետ էր նոյն իսկ տողերիս գրողը։ Միւս օրը լսում ենք, որ մնացած պարոնները, գրքք հրատարակելու վճռած հարցը քուէարկել են երկրորդ անգամ մեծամասնութեամբ ձայնից, այնպէս որ բոլոր քուէարկողները 40-ից աւել են եղել, այն ինչ, երբ դեռ չէին հեռացել խորհրդի նախագահը և միւս անդամները, քառասուն հոգի էին։ Զարմանում ենք թէ ինչպէս մօտ 15 հոգի հեռանալով, դարձեալ այն դիմեական արկղի մէջ երևացել են քառասունից աւել քուէներ։

Երևանում պատերի վրա կպած էին ափիշներ, որոնք յայտնում էին թէ՝ Վաղարշապատի թատերասիրաց խումբը ամսիս 10-ին ներկայացնելու է Երևանի Գայանեան օրիորդաց դպրոցի դահլիճում «Արշակ Բ.» ողբերգութիւնը, և «Սուտ ճրագնաւոր» վոդեվիլ 1 արարուածով։ Վաղարշապատից ամսիս 9-ին եկան թատերասէրները, որոնք թուով 10 հոգի էին և սկսեցին քաղաքիս մէջ տարածել իրանց տոմսակները։ Ամբողջ օրը ժողովեցին մօտ 50 ռուբլի արդիւնք, որի սակաւութեան պատճառով, երեի դադարեցրին յիշեալ ներկայացումը մի համառօտ յայտարարութեամբ։ Թէ ինչու ներկայացումն չաջողեցաւ, թող այդ պ. պ. թատերասէրները բացատրեն, իսկ մենք զարմանում ենք թէ ինչու այդ պարոնները մրջիւնների նման կէնտ կէնտ քաշվեցին Երևանից, անյայտ ձեռքերում թողնելով մինչև անգամ ստացված փողերը։ Տոմսակ գնողները համաձայն թատերասիրաց վերջին յայտարարութեան, չը գիտեն թէ ումից պէտք է յետ ստանան փողերը։ Երևանցիքս կը խնդրէինք հաւաքված փողերը վերադարձնել ըստ պատկանելոյն։

Նկատող

ԽԱՉԱԳՈՂԻ
ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԸ

—

Վերջին խօսքերը համարեա թէ չը լսեց պառաւը, որովհետև նա արդէն ուշաթափ ընկած էր։ Քաւոր Պետրոսի մոդական աղղեցութիւնը կրկին նրան ուշի բերեց, և բռնելով նրա թևից, նստեցրեց դիւանի վրա։

Փոքր ինչ հանգստանալուց յետոյ, արտասուքը աչքերում, հարցրեց նա.

—Այդ դուք որտեղից գիտէք։

—«Աստուծոյ մարդը» ամեն բան գիտէ, պատասխանեց քաւոր Պետրոսը ծանր կերպով։

Բաւական մեծ քանակութեամբ արծաթ արժեց պառաւին, մինչև «Աստուծոյ մարդը» յօժարվեցաւ քաւել նրա մեղքերը և ազատեց դժոխքի տանջանքներից։ Բացի դրանից, տուեց նրան մի սուրբ պատանք, որպէս Երուսաղէմի յիշատակ, և պատուիրեց մեռնելուց յետոյ նրանով թաղվել, ասելով թէ չար ոգիները երբէք չեն համարձակվի մօտենալ նրա մարմնին։

Պառաւին ըստ կարգին կողոպտելուց յետոյ, վերադարձանք նոյն հիւրանոցը, ուր թողել էինք մեր իրեղէնները։ Այստեղ գտանք արիսինիացուն անյայտացած։ Մեր հարցերին հիւրանոցի տէրը ոչինչ բացատրել չը կարողացաւ, որից կարելի լինէր մի որոշ հետևանքի հասնել։ Բայց քաւոր Պետրոսը իսկոյն հասկացաւ պատահածը, և մտաւ այն սենեակը, որտեղ դրած էին մեր իրեղէնները։ Նա սկսեց քննել արկղները։ Նրանցից մէկի կողպէքը կոտրած էր։ Դա մի և նոյն արկղն էր, որի մէջ սովորաբար պահում էինք մեր փողերը։ Պակաս էր յիսուն հազար ռուբլ։ Ես յիշեցի հայկական առածը.

«Գողը գողից գողացաւ,
«Աստուած տեսաւ, զարմացաւ»...

—Ես այդ վաղուց սպասում էի... ասաց քաւոր Պետրոսը և սկսեց ծիծաղել։

Զարմանալի ընաւորութիւն ունէր այդ մարդը. ոչինչ նրան վրդովեցնել չէր կարող։ Դա այն տեսակ քարասիրտ մարդիկներից էր, որոնք ոչ դժբախտութեան ժամանակ տրտմել գիտեն և ոչ յաջողութեան ժամանակ ուրախանալ։

Ես չը կարողացայ համբերել և փոքր ինչ կոպիտ կերպով ասեցի նրան.

—Ցիսուն հազար ռուբլ տարել է անպիտանը, և դուք դեռ ես ծիծաղում էք։—Էնից այս բոպէիս պէտք է նրա ետևից ընկնել։

—Երբ խաչագողը անյայտանում է, նրա ետևից այլ ևս չեն ընկնում, պատասխանեց նա, դարձեալ իր ծիծաղը չարունակելով։

—Ինչու։

—Նրա համար որ, անկարելի է գտնել։

—Ես այդ անպիտանին հէնց այս գիշեր կարող եմ բռնել։

—Չես կարող։ Եթէ նա իմ աշակերտն է, ես լաւ եմ ճանաչում, թէ ինչ պտուղ է...

Արիսինիացին քաւոր Պետրոսի ամենաընդունակ աշակերտներից մէկն էր։ Նրա իսկական անունը Մաթոս էր, բայց չափազանց խորամանկութեան համար կոչում էին «չէյթան» Մաթոս, որ նշանակում է սատանայ Մաթոս։

Ես հարցրի քաւոր Պետրոսից.

—Դուք ասում էք, թէ վաղուց սպասում էիք մի այսպիսի վարմունք նրա կողմից, երբ այսպիսի կասկած ունէիք նրա վրա, ինչու չէիք հեռացնում ձեղանից։

—Երբ խաչագողը կասկած ունի իր ընկերի վրա, այդ դէպքում ոչ նրանից բաժանվում է և ոչ հեռացնում է իրանից։

—Ապա ինչ է անում։

—Սպանում է...

Վերջին խօսքը ակամայ թռաւ քաւոր Պետրոսի բերանից։

—Սպանում է... կրկնեցի ես հետաքրքրութեամբ։

—Ուրիշ ճար չը կայ։ Եթէ կասկածաւորին կենդանի հեռացնէ, այնուհետև պէտք է զանազան չարիքներ սպասէ նրա կողմից։ Նա կարող է դաւաճանել, կարող է մատնել, մի խօսքով, չատ վնասներ կարող է տալ, որովհետև իր ընկերի գաղտնիքների մասին չատ տեղեկութիւններ ունի։

—Որպէս արիսինիացին մեր գաղտնիքների մասին...

—Այո։

—Ուրեմն ինչու չը սպանեցիք նրան։

—Խոստովանվում եմ, որ այդ դէպքում ես սաստիկ ծոյլ գտնվեցայ։ Միշտ այսօր էգուց ասելով գործը այնքան յետաձգեցի, մինչև նա աւելի ճարպիկ գտնվեցաւ...

—Այո, ճարպիկ գտնվեցաւ. բայց յիսուն հազար ռուբլ յափշտակելը, տարաւ իր հետ մեր գաղտնիքների մեծ մասը։ Այսուհետև նա ամեն տեսակ խաղ կարող է խաղալ մեզ հետ։

—Յարող է... ասաց քաւոր Պետրոսը,—մանաւանդ երբ կը մտածի, որ մենք նրան հանգիստ չենք թողնի...

Այդ ժամանակ միայն ես նկատեցի քաւոր Պետրոսի դէմքի վրա վրդովմունքի նշաններ։ Նա առ ոչինչ էր համարում յիսուն հազար ռուբլու յափշտակութիւնը։ Փողի կորուստը նրան չէր կարող խռովութիւն պատճառել. փող նա միշտ կարող էր գտնել։ Բայց նրան վրդովեցնում էր իր խաբված դրութիւնը։ Նա սաստիկ վիրաւորանք էր համարում որ գտնվեցաւ աշխարհում մի մարդ, որը կարողացաւ խաբել քաւոր Պետրոսին,—այդ խաբէյութեան մեծ հանճարին...

—Դէպք է նրան «ներողամտութեան նշան» ցոյց տալ, ասաց քաւոր Պետրոսը և վառեց երկու մամ, դրեց լուսամուտի առջև ներսի կողմից։

Դրսում տիրում էր դիշերային խաւարը։

—Այդ է «ներողամտութեան նշանը»։

—Այդ է։ Դէպք է նրան միամտացնել, որ մենք ներում ենք, որ մենք այլ ևս չենք հալածի նրան։

Քաւոր Պետրոսի վարմունքը ինձ բոլորովին ծիծաղելի երևաց։ Ես ասեցի.

—Նա կորաւ, գնաց, և գուցէ այժմ մի քանի հարիւր վերստ հեռացել է այս քաղաքից։ Նա որտեղից պէտք է տեսնէ այդ «ներողամտութեան նշանը»։

—Նա գուցէ այս բոպէիս պտտվում է մեր հիւրանոցի չուրջը։

Ես խլեցի մի տապար, որ այնտեղ դրած էր, և դուրս վազեցի, գոչելով.

—Եթէ այդպէս է, ես հիմա նրա փոքրիկ գլուխը կը ջարդեմ։

Քաւոր Պետրոսի զօրեղ ձեռքերը բռնեցին ինձ։ Նա ասաց բաւական հեղնական եղանակով.

—Աւելի լաւ կանես, եթէ նրա փոքրիկ գլխով ու փոքրիկ մարմնով չը խաբվես։ Նա թէև պրստիկ է, բայց չըստիկ է։ Նա վագրի սիրտ ունի և առիւծի ուժ։

Այդ խօսքերը սաստիկ վիրաւորեցին իմ հպարտութիւնը և ես փոքր ինչ տաքացած կերպով պատասխանեցի.

—Դուք կարծում էք, որ ձեր «ներողամտութեան նշանը» կօգնէ, և նա կը հաւատայ, որ դուք այսուհետև չէք հալածի նրան և իր անձը պաշտպանելու համար չի մատնի ձեզ։

—Օրինաւոր խաչագողը պէտք է այնքան ազնուութիւն ունենայ, որ հաւատայ։ Այդ նշանը մեր մէջ ընդունված է որպէս մի սուրբ պայման, որի դէմ հաղիւ թէ կը մեղանչէր ամենատոր խաչագողն անգամ։

Գ.

ԵՐԿՐՈՐԴ ՔԱՅԼ
ՍՊԱՆՈՒԹԻՒՆ

Քաւոր Պետրոսը զարմանալի հոտառութիւն ունէր վտանգի ժամանակ։ Նա իսկոյն հասկանում էր, երբ կարող էր պատահել որ և իցէ անյաջողութիւն։ Պառաւին ըստ կարգին կողոպտելուց յետոյ, արիսինիացու անցքից յետոյ, միանգամ ասաց ինձ

բորդական մասը (այս դեռ ամենաքիչը) բաղկացած է շրջմոլիկ, դատարկապորտ և բոլորովին անգործ մարդկանցից: Իսկ դրանք չաշխատող և սպառող պարազիտներ են մի հասարակութեան համար, և, իրանց գոյութիւնը պահպանելու համար՝ դիմում են գողութեան, ուրացութեան և այլ և այլ անբարոյական միջոցների:

Իմ կարծիքով, արդէն ժամանակն է հիմնաւորապէս պարապորդութեանց առաջն առնել. բայց թէ ինչ միջոցներ պէտք է գործադրել դրա համար, այդ հարցի արծարծելը բոլորովին բարձր եմ համարում իմ կարողութիւնից: Միայն այս կէտը կայ, որ պարապորդութիւնը համեմատաբար յետ ընկած և փոքրիկ քաղաքներումն աւելի չատ է տարածված, քան բազմամարդ և կենտրոնական քաղաքներում, այն էլ թուրքաբնակ քաղաքներումն աւելի չատ՝ քան հայաբնակ տեղերում:

Մ. Ա.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Ցիշեցնում ենք մեր ընթերցողներին և առհասարակ Թիֆլիսի հասարակութեանը, որ գոկտոր Արասխանեանց, այսօր, շաբաթ օր, 29-ին յունվարի, կարդալու է Արծրունու թատրոնում իր երկրորդ դասախօսութիւնը քաղաքական տնտեսութեան մասին: Սկիզբը 8 ժամին է և կը վերջանայ 10 ժամին: Տոմսակները ծախվում են թատրոնի կասսայում, կենտրոնական գրավաճառանոցում և Ցատուրեանցի մագազինում:

—

Յունվարի 27-ին հայոց գերասանական խումբը ներկայացրեց Արծրունու թատրոնում «Շուշանիկ» ողբերգութիւնը: Թատրոնը գրեթէ լի էր: Զարմանալի է ինչպէս հասարակութիւնը սիրում է «Շուշանիկ» ողբերգութիւնը և առհասարակ պատմական պիէսաները:

—

Երկար չորային և ցուրտ եղանակից յետոյ յունվարի 27-ին սկսեց անձրև գալ Թիֆլիսում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԲԻԱՑԻՑ

—

Կ. Պոլիս, 16 յունվարի

Մի թէ ընթերցողն չը պիտի զգար մեծ զայրոյթ մը երբ կարդար «Մասիս»-ի յունվարի 14 թուոյն մէջ թէ «Մամուլ»-ի ձերբակալված խմբագիրն ինքզինքն արդարացնելու համար ՊՐՊԱՐՈՒԹԵԱՆՑ և ՄԱՏՆՈՒԹԵԱՆՑ դիմեր է: Այս լուրը մեզ չատ և չատ անհաւատալի երևցաւ: Ուստի թող չը նեղանայ «Մասիս» երբ ուզեցինք դիմել ապահով աղբիւրներու այս եղելութիւնը լաւ մը հասկանալու և ձեզ հաղորդելու համար: «Մասիս»-ի հաղորդածներն դժբաղդաբար ոչ միայն ստոյգ են, այլ և մեղմութեամբ իսկ հրատարակուած: Զայս կը հաստատեն մեր ստացած մանաւոր տեղեկութիւնները: Մեր առջի նամակէն տեղեկացած էք թէ ինչու բանտարկուած է պ. Գէորգ Այվազեան «Մամուլ»-ի խմբագիրը: Պ. Այվազեան դատական հարցաքննութեանց ենթարկուած է: Երբ քննիչը կը հարցնէ իրեն այդ ոտանաւորը հրատարակած ըլլալու պատճառը, պ. Այվազեան սապէս կը պատասխանէ: «Այդ ոտանաւորը հրատարակելովս կառավարութեան ծառայութիւն մատուցած եմ... Այս պատասխանին վրայ քննիչը կապշի և խմբագիրը կը շարունակէ. «Այդ հրատարակութենէս այժմ դուք կրնաք գաղափար մը առնել թէ՝ հայոց դպրոցներուն մէջ ինչ ոգով դաստիարակութիւն կը տրուի: Դուք օսմանցիքդ պէտք է գիտնաք որ հայոց դպրոցներուն մէջ ուսանողած դաստիարակութիւնը բոլորովին հակառակ է օսմանեան տէրութեան շահուց և կը ծառայէ պատրաստել յեղափոխական սերունդներ: Այդ հրատարակած ոտանաւորիս պէս ազգասամբական երգեր կը սորվեցնեն մեր տղայոց: Թող կառավարութիւնը աչքը բանայ, ես պարզս կատարեցի: Կրթութեան նախարարութիւնը կըրնայ այսուհետև իրաւունք ունենալ համարձակապէս հայոց դպրոցներուն վրայ խստիւ հրամայել: Թիւրք քննիչը այս տեղեկութիւնները լսելով այնպէս մը ձևացուցեր է թէ՝ ամենևին ասոնց կարևորութիւն չը տար: «Եթէ այդպէս ուղիղ էր քու միտքդ, ըսեր է քննիչը պ. Այվազեանի, այն ատեն գալու ուղղակի տէրութեան խմացնելու էիր թէ՝ հայոց դպրոցները օսմանեան իշխանութեան հակառակ կրթութիւն կուտան: Կամ թէ երբ այդ ոտանաւորը հրատարակեցիր պարտաւոր չէիր միթէ տակը աւելցնել «այս հրատարակութիւնը կընենք կառավարութեան ուշադրութիւնը հրաւիրելու համար: Դու ասոնցմէ մէն չըրիր և այսօր ինչ տեսակ մարդ ըլլալդ յայտնի կերևի:» Հարցաքննութիւնէն վերջ կը վերադարձնեն Այվազեանը իր բանտը և կառավարութիւնն ալ կը սկսի նոր ընթացքի մը հետևիլ: Անմիջապէս կը հեռադրէ Կիւրին տեղական իշխանութեանց որ ձերբակալեն կասկածելի հայերը: Այս հրամանին վրայ տեղական իշխանութիւնք բանտը կը նետեն երեսունի չափ հայեր: Այս բանտարկեալներուն մէջն են ոմանք վարժարանի աշակերտներէն և դասատուներէն և մի քանի ուրիշ անձինք: Այս ձերբակալեալները ենթարկուած են խիստ հարցաքննութեանց: Կառավարութիւնը կը խուզարկէ անոնց տուներն ու տեղերը: Սարսափը կը տիրէ քաղքին հայոց մէջ: Դուռնէն հրաման տրուեր է նաև որ Պոլիս խըրկեն ոտանաւորի հեղինակը: Այդ հեղինակը Զէյթունցի հայ պատանի մ'է:—Այս գործոց վրայ պատրիարքարանի հեռագիրներ եկած են: Պոլսոյ հայ լրագիրները բաւական տեղեկութիւններ հաղորդած են:

Ամեն կողմ բանտ, ծեծ, արիւն, հալածանք, ահա մեզի համար 61-րդ յօդուածի գործադրութիւնը: Դիւրին է ենթադրել թէ մի Գէորգ Այվազեանի յիմարութիւնը, մատնութիւնը որչափ հայերու թշուառութեան պատճառ կըլլայ: Ասոնց հետ նորանոր դժուարութիւնք պատրիարքարանի և Դըրան միջև: Պատրիարքը օր օրին ծագած այս տեսակ խնդիրներով պիտի բռնաստուի կորսնցնել իր ժամանակը:—Կառավարութիւնը յարմար առիթ մը պիտի սեպէ այս գործը միջամտելու մեր ներքին գործոց և հսկելու մեր կրթական գործին:

Անցեալ նամակով ըսինք թէ՝ պ. Այվազեան եթէ հրատարակած է այդ ոտանաւորը ո և իցէ ազնիւ դաղափարի մը համար չէ: Իր գործածը չէ այն սխալներէն զոր կրնանք անուանել վսեմ սխալ: Ըրածը թողածը չը գիտցող անկարգ խմբագրութեան մը գործն է: Պ. Այվազեան կրնար այս փաստը յառաջ քշել ինքզինքը արդարացնելու համար: Պ. Այվազեան ունէր նաև աւելի զօրաւոր փաստ մը որով կրնար առանց չատ դժուարութեան արդարանալ: Իրաւ է որ այս փաստը քիչ մը խելքի հակառակ է և թիւրքերը, որչափ ալ որ թիւրք են, չը պիտի կրնային ըմբռնել թէ հնարաւոր է մի այդպիսի բան, սակայն ամբողջ պօլսեցին, բարեկամ թէ թշնամի Այվազեան պ. Գէորգի, կրնար այդմ վկայել: Դուք ալ չը պիտի ուզէք հաւատալ բայց ինչ կրնաք ընել: Պ. Գ. Այվազեանի ինքզինքը արդարացնելու զօրաւոր փաստը սա կըրնար ըլլալ թէ՝ ինքն «Մամուլի» խմբագիրը, չը հաւանիր ինչ որ կը հրատարակէ իր թերթին մէջ. վասն զի այդ խմբագիրը հաղիւ պարզ կարդալ մը գիտէ, իսկ պարզ գրելը տարակուսական:—Այսպիսի փաստ մը անհաւատալի է, թէպէտ և ճշմարիտ ճշմարտութիւնն է: Պոլսոյ մէջ հայ խըմբագիր ըլլալու կենսական պայմանը փոքր ինչ դաստիարակութիւն ունենալը չէ: Հայ թերթը խանութի մ'է որուն տէրը զայն բացած է լոկ ապրելու համար, ոչ թէ բարոյական ո և է նպատակ մ'ալ միասին ունենալով: Պոլսոյ մէջ լաւ հայ խմբագիր մը ըլլալու յատկութիւնն է նախ ամենևին խիղճ չունենալ. որչափ հնար է անամօթ ըլլալ, չունենալ ո և է ազնիւ զգացում: Մօրը կաթին հետ ծծած ըլլալ սարկութեան ոգին: Վայ թերթի մը տնօրէնին որ առանց այս զէնքերով զինուած ըլլալու կը նետուի հրապարակ վստահացած ըլլալով միայն իր կրթութեանը, բարոյականին և ազնիւ սրտին վրայ: Պ. Գ. Այվազեան կատարեալ տիպ մ'է պօլսեցի հայ խըմբագրին: Ոչ մի թերթի կրնայ պարծենալ թէ կարող եղած է գերազանցել «Մամուլ»-ը: Այս տարուր նիւթին վրայ չատ չերկարենք: Աւելորդ է ըսել որ ընտիր բացառութիւններ կրնան ըլլալ թերևս հայ խմբագրաց մէջ, և որք ունին պատուոյ զգացում: Ի հարկին զանոնք ալ կը ծանօթացնենք:

Անտարակոյս յայտնի է որ պատրիարք սրբազանը զիջած է բարեխօսել Դրան մօտ, վերջի օրերս իսկ, պ. Գ. Այվազեանի մասին: Քաղաքական ժողովոյ անդամներէն ոմանք անգամ թախանձեր են պատրիարք սրբազանը որ ընէ այս բարեխօսութիւնը: Պատրիարքը Դուռը թաքուր մը կը գրէ աղաչելով որ մեծ-եպարգոսը բաւական համարելով Գ. Այվազեանի քսան և հինգ օրուան բանտարկութիւնը ազատ թողու զնա:—Այսպիսի միջամտութիւն մը ազգային ուրիշ կարևոր գործոց կրնայ վնասել, ինչու մատնիչի մը համար վնաս կրեն կարևոր գործեր:—Ենթադրենք թէ Դուռը ի յարգանս պատրիարքի ազատութիւն շնորհէ պ. Գ. Այվազեանի, բայց այս ըրած չընորհքը հաշուոյ մէջ կանցնէ և երբ պատրիարքարանը ուրիշ կենսական խնդրոյ համար դիմէ իրան, այն ատեն քաղաքավարաբար իրեն կը հասկցնեն թէ՝ «հայոց պատրիարքի սիրոյն համար Գ. Այվազեանի պէս անձի մը ազատութիւն շնորհեց կառավարութիւնը, դեռ ինչ կուզեն հայերը:»—Մեր պատրիարքարանը պէտք չէ որ փոքր խընդիրներով զբաղի այժմ և երկրորդական կէտեր կարգադրելով անցնէ իր ժամանակը: Բայց ինչ ընել երբ ամեն ոք իր անձնական նկատումը կը նայի և ամենաչնչին խնդիրներով կուզէ զբաղցնել խեղճ պատրիարքը: Պատրիարքի սիրտը ըլլալով շատ ազնիւ, չը կրնար դիմանալ աղաչանաց: Այսպէս եղաւ պ. Գ. Այվազեանի խնդիրն:—Իսկ թէ Դուռը չուզէ լսել պատրիարքի խօսքին, և

—Մուրադ, պէտք է առժամանակ փոխել մեր մորթը...

Ես հասկացայ նրա միտքը: Նա ասել էր ուզում, թէ պէտք է փոխել մեր կերպարանքը, մեր արհեստի ու պարապմունքի ձևը: Ես շատ շուտ էի հասկանում նրա բոլոր փոխաբերական խօսքերը. օրինակ, երբ նա ասում էր՝ «երկինքը ամպած է», ես գիտէի, որ դա նշանակում է, թէ փոթորիկը մօտ է, սպառնում է վտանգ: Այսպէս մեր մէջ խօսքերի մեծ մասը պայմանաւորված էին, ունէին առանձին միտք:

Պատրաստվեցանք փոխել մեր «մորթը»:

Նոյն օրը թողեցինք մեր կեցած հիւրանոցը, գիշերով անցանք մի այլ հիւրանոց: Այդ այն նըպատակով էր, որ այստեղ մեր կերպարանափոխութիւնը ոչ ոք չը նկատէ, որովհետև առաջին հիւրանոցում բաւական ճանաչված էինք: Քաւոր Պետրոսը կարճացրեց իր փառահեղ սպիտակ մօրուքը, որ ծածկում էր նրա ամբողջ կուրծքը, խուզել տուեց գլխի արեղայական երկայն մազերը, յետոյ ներկեց սև գունով և համարեա թէ երիտասարդացաւ: Նրա դէմքը դեռ բաւական թարմ էր մնացել, միայն մազերը վաղօրօք սպիտակել էին: Նոյնը հրամայեց անել և ինձ: Իմ սև սաթի պէս փայլուն մազերը ներկելու պէտք չունէին, ես միայն կարճացրի, իսկ երեսիս մազերը դեռ այնքան չէին աճել, որ հարկաւոր լինէր կարել: Մենք ձգեցինք մեր արեղայական հագուստը, մի կողմ դրեցինք խաչն ու աւետարանը, և ստացանք աղքատ, թափառաշրջիկ մանրավաճառների կերպարանք: Անցանք մի այլ դաւառ: Այստեղ մեր ձիանները, ճանապարհորդական սայլակը, և ինչ որ աւելորդ ունէինք, բոլորը վաճառվեցան: Մի քանի անհրաժեշտ իրեղէններ, որ կարող էին երբեմն մեզ պէտք գալ, պահվեցան: Ո՞ւմը պահ տուեց քաւոր Պետրոսը,—ես հասկանալ չը կարողացայ:

Հագանք ճանապարհորդական կօշիկներ, ծնկներից վեր բարձր վզերով և սկսեցինք ոտքով թափառել գիւղից գիւղ: Քաւոր Պետրոսը կրած ունէր մի փոքրիկ արկղիկ, իսկ ես շալակել էի մի ահագին արկղ զանազան յարկերով, զանազան լայն և անձուկ խորշերով, որոնց իւրաքանչիւրի մէջ դարսված էին առանձին տեսակ վաճառքներ: Երբ մտնում էինք մի գիւղ, ես մանրավաճառների սովորական ձայնով եղանակում էի. «մանդրուք ապրանք... մանդրուք ապրանք... լաւ ասեղներ, թելեր, գուլպաներ, ձեռնոցներ, պատկերներ, յուլունքներ և այլն:

Իսկ շատ անգամ նոյն երկրի լեզուով երգում էի մի այսպիսի երգ.

«Վիքն է, լիքն է իմ արկղիկը
«Գայնզգոյն փարչաներով,
«Թող գնէ սիրուն աղջիկը,
«Ես կը տամ էժան գնով:

«Զըթեր ունեմ ես զանազան,
«Ծաղիկներով զարդարած,
«Մատնիք ունեմ, ապարանջան,
«Շուրջը ակներով շարած:

«Դուրս եկ, դուրս եկ կարմիր աղջիկ,
«Կը զարդարեմ քո մատները.
«Եթէ կը տաս ինձ մի պաչիկ,
«Զրի կառնես իմ չըթերը:»

Իմ ձայնը վատ չէր: Առհասարակ մանրավաճառի ձայնը այն ուրախալի ձայներից մէկն է, որ խիստ հաղիւ անգամ լսելի է լինում քաղաքներից հեռու ընկած գիւղերի մէջ: Այդ ձայնը մոգական ազդեցութիւն է գործում: Իսկոյն դուրս են վազում խրճիթներից կնիկներ, աղջիկներ, երեխաներ և հաւաքվելով ցանկալի հիւրի շուրջը, թափում են նրա քսակի մէջ իրանց տարիներով խընայած գրօշները: Ա՛խ, որքան ուրախալի բան է առևտուր ունենալ մի այսպիսի միամիտ ասաբակութեան հետ, որ ոչինչ տեղեկութիւն չունի վաճառքի թէ արժողութեան և թէ որպիսութեան մասին...

Ճորտութիւնը այն ժամանակ դեռ տիրում էր այդ երկրում: Գիւղերում երբեմն պատահում էին մի-մի հարուստ տներ: Դրանք ըստ մեծի մասին լինում էին կալուածատէրերը, որոնց պատկանում էր գիւղը իր ճորտերով: Մեզ հրաւիրում էին աղայի տունը: Շատ անգամ ամբողջ ժամեր էին անցնում, մինչև տիկինը ընտրում էր իր համար ձեռնոցներ, մանկահասակ օրիորդը՝ անուշահոտ իւղեր, աշակերտ որդին՝ մատիտներ, գրիչներ, երեխաները՝ խաղալիկներ, աղախինները՝ գլխի թաշկինակներ, մի խօսքով, ամեն մէկը ընտրում էր իր պէտքերի համար զանազան բաներ: Այնուհետև պէտք էր երկար ու բարակ բաղար անել, երդվել, ստախօսել, գովաբանել վաճառքը և այլն:

Այդպիսի դէպքերում քաւոր Պետրոսը առհասարակ ինձ էր թողնում առևտուրը առաջ տանել: Իմ դէմքը բաւական գեղեցիկ էր: Ես ընդունակ էի գրաւելու, հարկաւոր ժամանակ հանաքներ և սրախօսութիւններ անելու: Այդ պատճառով դերահաս աղջիկներին աւելի ախորժելի էր ինձ հետ բաղար անել, քան թէ մռայլոտ քաւոր Պետրոսի հետ գործ ունենալ: Գիւղեցկադէմ գործակատարը մի լաւ գրաւական է առևտուրի յաջողութեանը, մանաւանդ երբ գնողները կանայք են:

Շատ անգամ ես զիտմամբ գործը երկարացնում էի, աւելի այն ժամանակ, երբ տեսնում էի, որ, ինչպէս ասում են, մէկի «աչքումը լոյս կար»:—Օրիորդ, ասում էի, ձեր գեղեցիկ գլխին շատ կը սազի այդ հիանալի վարսակալը, յատուկ ձեր սիրուն մազերի համար պատրաստված է: Օրիորդը ժպտում էր, խնդրում էր մօրից գնել այն վարսակալը:

Ի՞նչ էր անում քաւոր Պետրոսը:

Տեսար, մօտեցաւ տան պառաւին: (Ըստ մեծի մասին այնպիսիներին, որոնց վրա տանեցիք ուշադրութիւն չեն դարձնում, միայն նայում են, որպէս մի հնացած, զործածութիւնից ընկած կարասիքի վրա): Կը սկսէր զբաղեցնել նրան, առածներ, առակներ կը պատմէր, և արտասվելու չափ կը ծիծաղացնէր: Նա առանձին ընդունակութիւն ունէր պառաւներին գրաւելու: Այդ միջոցին ես առևտուրը աւելի ձգ-ձգում էի, որպէս զի քաւոր Պետրոսը աւելի երկար ժամանակ ունենայ, որպէս նա սովորաբար ասում էր՝ «տան յիմարի ուղեղը թափ տալու»...

Այդ առանց նպատակի չէր: Որովհետև քաւոր Պետրոսը իր յատուկ խորամանկութեամբ տեղեկանալով նոյն տան հանգամանքներին, այնուհետև քիչ չէր պատահում, որ միանգամ իր արկղով այն տունը մտնող մանրավաճառը միւս անգամ յայտնվում էր բոլորովին ուրիշ կերպարանքով.—խաչով, աւետարանով, կամ սրով գիշերային մութեան մէջ...

Եւ այդպէս, մեր մանրավաճառութիւնը ունէր ոչ թէ շահեկան նպատակ, այլ մենք գործ էինք դնում որպէս մի միջոց, որ նրա պատրուակով կարողանայինք մեր ցանկացած տեղերը մտնել հետազօտել, լրտեսել, առանց մեզ վրա կասկած յարուցանելու:

Ես մինչև այսօր սարսափելով յիշում եմ մի դէպք... մինչև այսօր զգում եմ իմ ձեռքերի վրա այն անմեղ արեան թացութիւնը...

Գտնվում էինք փոքրիկ գաւառական քաղաքում: Մենք մտանք մի տուն, ի հարկէ, իբրև մանրավաճառներ: Քաւոր Պետրոսը սովորութիւն ունէր հարկը պահանջած տեղերում ցոյց տալ իրան կամ յիմար, կամ ապուշ և կամ չափից դուրս միամիտ: Այդ տան մէջ նա ձևացրուց իրան սաստիկ երկչոտ:

Այնտեղ ապրում էին չորս հոգի միայն՝—երկու տարեւոր ամուսիններ, մի սպասաւոր և մի աղախին: Ամուսին այրը ծիսում էր իր չիբուխը և անդադար գանգատվում էր ռեվմատիզմից: Պառաւ տան տիկինը զբաղված էր իր մոխրագոյն թութակով և երկու սպիտակ կատուներով, որոնք նրա գլխաւոր մխիթարութիւնն էին ներկայացնում:

(ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿՎԻ)

ըսէ թէ եղեռնական գործ մ՚է այդ, դատարանաց յանձնուած է և կառավարութիւնը չէ կարող ճնշում բանեցնել դատաւորաց վրայ, ինչ պիտի ըսէ պատրիարքարանը:—Քանի որ պատրիարք սրբազանը յաթոռ վերադարձաւ չէի կրնար երևակայել թէ օրչափ անձեր պատրիարքի կը դիմեն, սրբազանի միջնորդութիւնը կը խնդրեն ամենափոքր գործերու համար: Չենք ըմբռներ թէ պատրիարքի զօրութիւնը երկրորդական գործերու մէջ սպառելու չէ, և գլխաւոր հարցերու պահելու ենք ամրողջ ոյժը:

—

Կարինի խնդրոյն վրայ նոր տեղեկութիւններ չը կան: Կը լսուի թէ՝ բոլոր ձերբակալեալները արձակեր են միայն 4—5 անձինք բանտը մնացած են և կառավարութիւնը ասոնց վրայ ի գործ պիտի դնէ իր բոլոր խստութիւնը: Նախորդ նամակներով բացատրեցինք թէ ինչու Դուռը կուզէ խղդել այս գործը: Թիւրքերը շատ կատղած են որ Անգղիական թերթերը կարևորութիւն ընծայեցին Կարինի գործոց և համարեցին այդ դէպքերը գործնական ապացոյցներ հայոց ժողովուրդեան ընդդէմ թիւրք կառավարութեան:—«Հաքիքաթ», որ պաշտօնի բերանը կը սեպուի, հրատարակեց երկկատաղի յօդուած մը մեզի դէմ:—«Հաքիքաթ» կուզէ ծաղրել զմեզ որ կը նկրտինք Պուլկարաց նմանել, մինչդեռ անոնք ութսուն տարիներ պատրաստութիւն տեսան և կրթուեցան: Քիւրդի զըլխարկներ դնող (կակնարկէ «արախճինը») հայերը լեցուցեր են, կըսէ եւրոպական լրագրաց թղթակիցները և ասոնք ալ, կարևորութիւն տալով հայոց՝ հեռագիրներ կընեն Եւրոպա:—Զարմանալի է որ այն պահուն երբ սուլթանը այնքան համակրութիւն կուզէ ցոյց տալ հայոց, պալատի թերթը այնքան դառնութեամբ խօսի: Այդ անքաղաքագիտական լեզուն ուրիշ բանի չը ծառայէր բայց եթէ գաւառներու մէջ հայոց և թրքաց յարաբերութիւնները թշնամական ընելու: Մենակ մենք չենք որ ատէլ պիտի վնասինք:—Թիւրքերը իրենք թող մտածեն որ չը զժգոհացնեն հայերը: Ինչպէս իրենց այս անխոհեմութեամբը այնքան ազգութիւնները հանեցին իրեն ձեռքէն, Հայաստանն ալ պիտի կորսնցնեն:—Թիւրք թերթը եթէ այդքան կը բարկանայ հայ երիտասարդաց որք օտար թղթակցաց կը դիմեն և իրենց թշուառ ազգին արժանիքը կուզեն բարձրացնել օտարին առջև, թող քիչ մը իր բարկութիւնը պահէ իր հայրենակցաց:—Մեր երիտասարդներուն ըրածը ամենը գործ է, և այս ամենութիւնը պէտք է ճանչնան նոյն իսկ հակառակորդք: Իսկ թիւրքերուն ըրածը ինչ է: Եւրոպական մեծ թերթերու թղթակիցները վարձած են Պոլիս այնպիսի թիւրքեր, որք բարձր դիրք ունեն և այս անձերը շարունակ տեղեկութիւն կը հաղորդեն ամեն դարձուածքներու վրայ, որչափ որ այդ գործերը կեղտոտ ըլլան: Նոյն իսկ պետական խորհուրդին մէջ իրենց վարձկանները ունեն:—«Թայմզ» ունի մի թիւրք արքունի պալատին մէջ և մի թիւրք Դրան մէջ:—«Թան» բացի իր պաշտօնական ֆրանսացի թղթակցին, ունի մի նշանաւոր անձ որ այդ թերթին կը հաղորդէ, չեմ գիտեր ինչ խղճով, կառավարութեան շատ գաղտնի գործերն: Ասոնք «Հաքիքաթի»-ի աչքին չեն զարներ:—Իսկ ինչ կընեն մեր խեղճ երիտասարդները: Առանց ո՛և է վարձու, առանց ո՛և է փոխարինութեան կը դեգերին Եւրոպական թերթերու թղթակցաց տունները, անոնց ուշադրութիւնը կուզեն գրաւել տառապեալ հայ ազգին վերայ: Այդ երիտասարդները բաւական ուսում ունեն, դէմքերնին ազնուութիւն ցոյց կուտայ և համակրութիւն կը գրաւեն: Շատ անգամ ծախքերու տակ կը մնանեն: Տեսայ անոնցմէ երիտասարդներ որք շատ անգամ ամրողջ ցերեկները անօթի կը մնային որպէս զի կարենան շատ մաքուր զգեստներ ունենալ և թղթակցաց ներկայանալ: Այս տեսակներն են որ կը կորուին իրենց բերնէն և կուգեն մեծ սրճարաններու մէջ պատիւ ընել թղթակցաց և անոնց կարևոր տեղեկութիւններ հաղորդել: Ասոնց կեանքը յարատև վտանգի մէջ է: Նոյն իսկ «Դէյլի Նիուզ»-ի թղթակիցը կըսէր ասոնց «զգուշացէք ինձ գալէ, հաւանօրէն Պոլիսը կը հսկէ ինձ այցելութեան եկողներուն վրայ:»—Եւ ասոնք կը պատասխանէին «մեր կեանքը մեծ բան մը չարժէր»: Այսպէս կը պատասխանէին և իրենց ուղածները կրնային հրատարակել տալ «Դէյլի Նիուզ»-ի մէջ:—Ո՛չ մի փառք կայ ասոնց համար, ո՛չ մի պատիւ կայ, զի ծածուկ կը գործեն: Եւ շատ անգամ առանց գիտնալու ասոնց գործերն, որչափ նախատանաց, որչափ արհամարհանաց առարկայ կըլլան: Եւ սակայն, առանց բերանին բանալու, կուզեն կատարել իրենց պարտքը:—«Հաքիքաթ» չը յուզուիր այս ամենը տեսնելով և կուզէ զանոնք ներկայացնել իբր տաք գլուխ յիմարներ: Բայց ո՞ գիտէ թէ թիւրք թերթը զայրոյթէն չէ որ այսպէս կը խօսի, տեսնելով այն անհուն տարբերութիւնը որ կայ գերի ժողովուրդին և իր տիրոջ մէջ:—Հայը աստիճանաբար կը բարձրանայ, թէպէտ սանդուղին առաջին աստիճաններուն վրայ է. թիւրքը, հայուն տէր է, արագաքայլ կը դարի:—Ինչ ընենք, ասոնք պատմութեան օրէնքներն են:

Եւրոպայի մէջ ալ բաւական կաշխատին հայերը, որոշ պարագլուխ կընայ սեպուիլ պ. Յակոբեան, որ Լօնդրայ է: «Թայմզ» կը շարունակէ զրաղիլ հայոց խնդրով, իր առաջնորդող յօդուածներուն մէջ: Կը յայտարարէ թէ՝ Անգղիա կը համակրի հայ ազգին և անոր վիճակի բարւոքման պիտի աշխատի: Ուշադրութեան արժանի են «Թայմզ»-ի դիտողութիւններն 61-րդ յօդուածի գործադրութեան կարևորութեան վրայ: «Թայմզ» յոյս կը յայտնէ թէ՝ լորդ Տըֆրէն երբ Պոլիս վերադառնայ Հայկական խնդրոյ լուծման կարենայ զօրաւոր լուծում մը տալ:—Այս տեսակ կարևոր յօդուածներն հոս դժուար կըլլայ թարգմանել և չեմ կարծեր որ մեր թերթերը ամրողջապէս հրատարակեն: Համառօտութիւն մը տալով կը գոհանան: Ստոյգ չենք գիտեր թէ այդ թերթերը հոգ կընդունին թէ ոչ, որպէս զի ընդ այնմ թղթակցութեանց մէջ կարևոր կողմներն թարգմանէին:

Կարնոյ խնդրոյն վրայ խօսած ատենս մոռցանք ըսել թէ՝ «Սթամբուլ» կը հաղորդէ որ Կարինի մի քանի դատական պաշտօնեայներ պաշտօնանկ եղած են: Մի հայ Աղէքսանդր Տէր-Ներսէսեանց անուանուելէ է Կարնոյ գաւառին ընդհանուր դատախազ (procureur général):

—

Երկու օր առաջ, ուրբաթ օր, պատրիարք սրբազանը բաւական ծանր վտանգ մը անցուց: Սրբազանը Օրթագիւղէն կուգար և Պոլիս պիտի անցնէր, նստած իր երկձի կառքին մէջ: Կառքը կանցնի Ղալաթիոյ նեղ փողոցի մը մէջէն, սանդրգճըլար ըսուած, ուսկից Քարաքէօյ կուգայ, անտի կամուրջ:—Այդ նեղ փողոցի մէջ, ուր թրամվէ կառք ձի կանցնին, կեղտոտ փողոց մ՚է և ոստոստելով կը քալենք և ամեն օր ջախջխուելու վտանգի մէջ ենք: Այլանդակ տեսարան մը կընծայէ այդ փողոցը, ամեն տեսակ խանութներ անխտիր իրարու քով են, ժամագործը և մսավաճառը միասին են: Մի մորթած խոզ կը հանէին մսավաճառի մը խանութէ. փոխանակ բարեպաշտ բարապանի, ձիերը կերեի թէ գայթակղեցան: Այդ այլանդակ մորթուած կենդանին տեսնելով ձիերը կը խրտչին, փայտ մը կը կոտրի իրենց կողերը կը մանէ, և կառքը կը սկսին սանձարձակ վազել: Կառապանը անկարող է սանձել ձիերը, բարապան Աւետիսը մոռնալով իր գայթակղութիւնը և խաչ հանելը դադրեցնելով, վար կը ցատքէ օգնելու կառապանին:

Խեղճ մարդը կը կարծէ թէ Քռմ-քարու է: Ղալաթիա ողջ պտտելու համար երկար փորձառութիւն պէտք է: Խեղճ բարապանը երբ վար կը ցատքէ վար կիյնայ և երբ կը սթափէ կը տեսնէ թէ՝ իր ոտքերէն մին իրմէ առաջ վազեր է: Աւետիս աղբօր մէկ ոտքը տեղը չէր այլ ևս: Կառքը կը սլանայ, ո՞ գիտէ ուր պիտի զարնուի, ծովը պիտի իյնայ: Սարսափը մեծ է: Փոքրիկ հրապարակ մը կայ, հոն կը կայնեն կառքերը կը վազեն կառապանները, ամենքը միանալով կը զսպեն ձիերը մեծ դժուարութեամբ: Խեղճ պատրիարքը գոնեատ, սարսած էր: Ի՛նչ մեռնելը գոյէ հոգ չընէր, բայց մեռնել պարապ տեղ: Պատրիարքը կեկնէ ուրիշ կառք մը նստելով կը շարունակէ ճանապարհը: Երեկոյին կիները կըսէին «պատրիարքը աչքի եկաւ:»

Հայկակ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

—«Triester Tagblatt» լրագիրը, լիազօրութիւններ ստանալով յայտնում է, որ վերջին ժամանակներում մամուլի մէջ երևեցած բոլոր լուրերը, իբր թէ կոմս Շամբօր Իտալիա կամ Ֆրանսիա է գնում, անհիմն են: Կոմսը կապրի, որպէս հաւանական է, մինչև գատիկը Հօրվիցում, իսկ յետոյ կրկին իր Ֆրօշդորֆեան ամրոցը կը վերադառնայ: Նա անկասկած մեծ հետաքրքրութեամբ հետևում է Ֆրանսիայում կատարվող բոլոր նշանաւոր անցքերին, բայց մի և նոյն ժամանակ բոլորովին այն դիտաւորութիւնները չունի, ինչ որ վերագրում են նրան մի քանի վառ երևակայութիւն ունեցող պուբլիցիստները:

—«Paris» լրագրի խօսքերով գեներալ Կամպենօն դրականապէս հրաժարվեցաւ զինուորական մինիստրի պաշտօնից: Նապոլէօնի մանիֆէստը տպող տպարանատէրը 400 ֆրանկ տուգանքի է դատապարտված:

—Փարիզից լրագիրներին հեռագրում են յունվարի 20-ին (31), որ ծովային մինիստրութիւնը ժամանակաւորապէս յանձնած է գիւղատնտեսութեան մինիստր Մաղին:

—Անգլիայից հաղորդում են հետևեալը: Այս օրերս Մալլօում պարլամենտի անդամի ընտրութիւններից երևում է, որ Իրլանդիան անհաշտ է և այդպէս էլ կը մնայ: Ընտրված է «United Ireland» յեղափոխական լրագրի հրատարակիչ Օբրիէն 161 ձայնով. այն ինչ կառավարական կանդիդատ Նէյշ միայն 89 ձայն ստացաւ: Օբրիէն հասակով 30 տարեկանից աւելի չէ. նա քաղաքական գրող էր Ֆրիմանի լրագրում և ապա յանձնառաւ վերոյիշեալ լրագրի հրատարակութիւնը, որի մէջ հողային լիգայի ամենածայրայեղ մտքերն էին յայտնվում: Նրա հայրենակիցների դէպի նա ունեցած համակրութիւնը բացատրվում է նրանով, որ նորերումս նա տուգանքի ենթարկվեցաւ. այնուամենայնիւ, նրա յաղթութիւնը Մալլօում անսպասելի էր մինչև անգամ հողային լիգայի անդամների համար:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ տարվայ յուլիս ամսից Փարիզում գոյութիւն ունի մի «Պատմական կլուբ» (Cercle historique): Նորերումս հռչակաւոր զիտնական Բրնան դասախօսութիւն կարդաց հրէական ժողովրդի մասին: Նա այդ դասախօսութեան մէջ ապացուցանում էր, որ հրէութիւնը այն ձևով, ինչ ձևով որ նա գոյութիւն ունի ներկայ ժամանակում, աւելի կրօնական հասկացողութիւն է, քան թէ էանօգրաֆիական, ինչպէս որ առհասարակ կարծում են: Սկսեալ Աղէքսանդր Մակեդոնացու ժամանակներից, հրէաները շատ եռանդոտ պրօպագանդայով էին պարապում իրանց հայրենիքից դուրս և իրանց կրօնն ընդունել տուին մի քանի ժողովուրդներին, ինչպէս, օրինակ, խազարներին և արիսնացի ֆէլլախներին: Այդ կրօնափոխութիւնը հրէական ժողովրդին ազգային կապերով միացրեց ուրիշ ցեղերի հետ: Այդպիսով հակասեմիտական շարժումը, որ սկսվեցաւ մի քանի երկրներում ցեղական պատերազմի տեսակէտից, հիմնված է պատմական սխալի վրա:

* * *

Հակասեմիտական շարժման ամենաղլխաւոր առաջնորդներից մէկը Գերմանիայում, դոկտոր Հերման Ֆօրստէր, այս օրերս հրապարակագէս յայտնեց մի ժողովում, որ հրաժարվում է հրէաների դէմ կռիւը շարունակելուց և թողնում է Բերլինը ու Գերմանիան հրէաների ճանկը: Իսկ ինչն վճռել է վաղ ընդ փոյթ հեռանալ հայրենիքից, որոնել Աֆրիկայում կամ Ամերիկայում մի երկիր, որ չէ վարակված դեռ ևս հրէականութեամբ և հիմնել այնտեղ մաքուր գերմանական գաղթականութիւն, որի մէջ, շատ կարելի է, երբ և իցէ կիրառվի իսկական գերմանական իդէալը:

* * *

«L'Economiste Français» լրագիրը հաղորդում է հետաքրքիր տեղեկութիւններ Ֆրանսիայի և Մեծ-Բրիտանիայի առևտուրի մասին անցեալ տարում: Այդ երկիրներից առաջինում, այսինքն Ֆրանսիայում, 1882 թվին ապրանքներ են բերվել 4·972,070,000 ֆրանկի, իսկ ուրիշ երկիրներ տարվել են 3·596,164,000 ֆրանկի, բոլորը 8·568,234,000 ֆրանկի: 1881 թվին թէ Ֆրանսիա բերված և թէ դուրս տարած ապրանքների ընդհանուր գումարը շատ պակաս էր, այն է 8·424,912,000 ֆր.: Մեծ-Բրիտանիայում նոյնպէս աւելի աճեց առևտուրը. 1881 թվին 693,856,125 ֆունտ ստերլինգի առևտուր է եղել, իսկ անցեալ տարի 719,305,839 ֆունտ ստերլինգ: Ֆրանսիական մի քանի ապրանքներ սովորականից պակաս ծախվեցան, և ուշադրութեան արժանի կէտն այն է, որ այդ ապրանքների թըւում գտնվում են և մոդային ապրանքները, այդպէս անուանված «articles de Paris»: Այդ ապացուցանում է, որ Ֆրանսիայի նշանակութիւնը, որպէս մոդաների օրէնստուն, ընկնում է, որովհետև հանրապետութիւնը չէ կարող այդ կողմից կայսրութեանը փոխարինել: Այդ հանգամանքը ուրախալի է, մանաւանդ այն պատճառով, որ ֆրանսիական ուրիշ ապրանքների վաճառառութիւնը մեծացաւ և աւելորդով է վարձատրում ֆրանսիական արդիւնաբերութիւնը: Անցեալ տարի Ֆրանսիան ուղարկեց, օրինակ, արտասահման 301,419,000 ֆրանկի մետաքսէ գործուածներ փոխանակ նախընթաց տարում ուղարկած 245,128,000 ֆրանկի: Սատիկ աճեց բրդեայ, կանեփի և բամբակի գործուածքների, գլխարկների և ժամացոյցների արտահանութիւնը և այլն: Եգիպտոսը, տեղական անցքերի պատճառով, 1882 թվին աւելի պակաս բուրդ հասցրեց Ֆրանսիային, քան թէ նախընթաց տարիներում: Միացեալ-Նահանգներից եկող ապրանքների քանակութիւնը նոյնպէս պակասեց: Այդպիսով, ասում է «Моск. Телеграфъ» լրագիրը, Մեծ-Բրիտանիայի մտտեսական կախումն անդրատլանտեան մեծ հանրապետութիւնից թուլանում է, բայց մի և նոյն ժամանակ մեծանում է մետրօպօլիայի համար հնդկական կալուածների նշանակութիւնը, որ քաղաքական մեծ նշանակութիւն ևս ունի:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունվարի: Թագաւորը բարեհաճեց այցելել Նիկոլաեվսկի ինժեներների ուսումնարանը և ակադեմիան: Տերսկի կօզակների զօրքերի ատաման գեներալ Սվիստունով արձակված է այդ պաշտօնից: Լուր է տարածված, որ կանանց բարձր կուրսերի հարցը վերջնականապէս վճռված է. բժիշկ կանայք իրաւունք են ստանում բժշկել ընդհանուր հիւանդութիւններ և ծառայել կանանց և մանկական հիւանդանոցների մէջ:

ՓԱՐԻԶ. 27 յունվարի: Պատերազմական մինիստրը յայտնեց սենատի յանձնաժողովին, որ արքայազն իշխանների որդիքը ենթարկված չեն լինի ընդհանուր զինուորագրութեանը: Մասնաժողովի զեկուցումը պահանջում է անպայման մերժել իշխանների մասին օրէնքը: Շարեթ ուղևորվեցաւ կոմս Շամբօրի մօտ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունվարի: 1882 թուականի յունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 10-ը ռուսաց երկաթուղիները տեղափոխեցին 1244 միլիօն պուդ բեռներ և ստացան 190 միլիօն ռուբլ: 1882 թուականի ընթացքում բերված են Ս. Պետերբուրգ բեռներ երկաթուղիներով 86 և նեվա գետի վրա 201 միլիօն պուդ, դուրս են տարված 42 միլիօն պուդ:

ՕԴԷՍՍԱ, 27 յունվարի: Բէյդը մաքրվեցաւ: Նաւադնացութիւնը սկսվեցաւ: Շատ բեռների են սպասում: Բոլոր լրագիրները տպել են հրովարտակը և գովում են զգացմունքների բարձրութիւնը:

ՓԱՐԻԶ, 27 յունվարի: Իշխան Նապոլէօնի գործը կը քննվի մարտին:

ԿԱՅԻՐԷ, 27 յունվարի: Անգլիայի կօլվինին եգիպտական կառավարութեան ֆինանսական գործերի խորհրդատու նշանակելու հետ հրատարակված է Շերիֆ-փաշայի զեկուցումը, որ ապացուցանում է, թէ անգլօ-ֆրանսիական հսկողութեան ոչնչացնելը անհրաժեշտ էր, որովհետև անպատասխանատու աստիճանաւորները միայն դժուարացնում էին վարչութիւնը, իսկ խորհրդատուն կը գործէ կառավարութեան ցոյց տուած սահմանների մէջ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 27 յունվարի: Այսօր վերադարձաւ արտասահմանից Մեծ Իշխան Նիկոլայ Նիկոլաեվիչ Աւագը: Յունվարի 25-ին Մեծ Իշխան Վլադիմիր Աղէքսանդրովիչի մօտ զգեստաւորված բալ կար: Մօտ 250 հրաւիրված բարձր անձինք և օգոստափառ տան տէրերը հագել էին XVII դարի ռուսաց բոյարների հագուստներ: Թագաւորը հեծելազօր արտիլերիայի համազգեստով էր, իսկ կայսրուհին ցարեվնայի զգեստով:

ԼՕՆԴՕՆ, 28 յունվարի։ Պարլամէնտի անդամներ, իրլանդացիք Դէվիտ և Գիլի կալանաւորված են, որովհետև հրաժարվեցան պարտաւորվել չը շարունակել վրդովեցուցիչ ատենաբանութիւններն անել։ Դիւֆէրին ընդդէմ է Եգիպտոսի միացման. նա կարծում է որ անգլիական շահերը ապահովացնելու համար, բաւական է օգնել խեդիվին վերանորոգել երկիրը։ Ա. յսօր բացված է Դունայեան կոնֆերենցիան. նախագահում է Գրենվիլ։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 28 յունվարի։ Մեծ պասին տեղի ունենալու են ժողովներ ուղղափառ հոգևորականների և աղանդաւորների, կրօնական հարցերի մասին վիճաբանելու նպատակով։ Երէկ ուղևորվեց դէպի Փարիզ այնտեղի ռուսաց դեսպան, իշխան Օրլով։ Փոխադարձ կրեդիտի ընկերութեան գործի առիթով, յունվարի 26-ին, ճառեր խօսեցին պրօկուրօրի օգնականը և քաղաքական կողմերի հաւատարմատարները։ Կարծում են որ վճիռը, այդ գործի վերաբերութեամբ, կը կայանայ շաբաթ օր։

ՓԱՐԻԶ, 28 յունվարի։ Լօնդօնից հաղորդում են որ աներկբայելի է թէ Դունայեան կոնֆերէնցիան կընդունի Ռուսաստանի առաջարկութիւնները Կիլիեան դեռաբերանի վերաբերութեամբ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԾՈՎԱՑԻՆ ԽՈՏ մեծ քանակութեամբ 2 ր. 40 կ. պուդը, իսկ մի հակ (մօտ 9 պուդ) առնողների համար 2 ր. 20 կ.։ **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ** մէջ նոյն տեղը լապտերներ 30 կոպէկից, ԹԷՑԱՄԱՆՆԵՐ 35 կ., 100 ասեղը 8 կ., պատառակներ 20 կ., կոնֆետներ լուծողական ձէթից, ՓՕՇԻ լուացքի համար։ Բժշկական ԹՈՒՂԹ վատեր-կլօզետի համար։ ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը։ Մակինտօշներ 6 ր. և այլն։

7—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ԲԺՇԿԱՆՈՑԻ դիրեկտօր Լիսիցեվ յայտնում է որ բժշկանոցի մէջ ամեն օր լինում է հիւանդների ընդունելութիւնը առաւօտեան 9 ժամից մինչև 1 ժամ կէսօրից յետոյ։ Ամեն օր հետևեալ բժշկներ են ընդունում. Յարութիւնեան ժամը 9-ից մինչև 10 ներքին հիւանդութիւններով, Միրզօվ և Լիսիցեվ 10—11 ժամ ներքին հիւանդութիւններով, տիկին Պօտապօվա 11-ից մինչև 12 ժամ, կանանց և երեխաների հիւանդութիւններով, Նաւասարդեանց 12-ից մինչև 1 ժամ վիրաբուժական և սիֆիլիտական հիւանդութիւններով։ Բացի սրանից Գօրալեվիչ (երկուշաբթի օրերը 10—11 ժամ) ընդունում է ներքին հիւանդութիւններով, Մէլիքօվ (երեքշաբթի և հինգշաբթի օրերը 12—1 ժամ) կանանց և երեխաների հիւանդ., Մինկեվիչ (երեքշաբթի և ուրբաթ օրերը 9—10 ժամ) վիրաբուժական հիւանդ., Բէյլիս (երեքշաբթի և շաբաթ օրերը 10—11 ժամ) աչքի հիւանդ. Բախուտով (երեքշաբթի օրերը 11—12 ժամ) մանկաբարձական, կանանց և երեխաների հիւ., Բաբաեվ (երեքշաբթի և շաբաթ 11—12 ժամ) ներվային և ներքին հիւ., Կրասնոգլիադով (չորեքշաբթի և ուրբաթ 10—11 ժամ) ներքին հիւ., Եանկովսկի (ուրբաթ և շաբաթ 11—12 ժամ) ներքին և վեներական հիւանդութիւններով։ Իսկ իր տանը ամեն օր ընդունում է ատամնաբոյժ Վօլֆզօն այն աղքատ հիւանդներին, որոնք բժշկանոցի տոմսակ են ներկայացնում։

ՄԱՄՈՒԼԻ ՏԱԿԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ

„ԱՂԲԻՒՐ“

ամսագրի I համարը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

I Շնորհաւոր նոր տարի, բանաստեղծութիւն. . . . . Ղ. Աղայեանց
II Ուրիշի բունը քեզ բուն չի դառնալ. Ծիծեռնակների կեանքից—օր. Մ.
III Օձամանուկ և Արևահատ ազգային հէքիաթ. . . . . Ղ. Աղայեանց
IV Թագաւոր և Արհեստաւոր (վրացերէնից). . . . . օր. Ն. Տ. Մ.
V Աղաւնիներ (Տուրգենևից) Բաֆֆի։
VI Հետաքրքիր լուրեր. Զուարճալիք։
VII Հանելուկներ, շուտասելիքներ ըերուներ, շախմատի, Թուաբանական խաղեր և այլն։
VIII Թիթեր, նոտաներով երգ.

Երկրորդ բաժին.

I Խմբագրութեան կողմից.
II Մատենախօսութիւն՝ իմ նամակները Գաբ.
III Մահացուցակ.
IV Խառն լուրեր.
V Առաջարկութիւններ.
VI Պատասխաններ.

Յայտարարութիւններ

Որովհետև ամսագրի կազմի նկարը Պետերբուրգից պէտք է ստացուի ամսոյս 25-ն այդ պատճառով յունվարի համարը ստիպված կը լինենք միայն ամսոյս վերջին ուղարկել բաժանորդներին։

Տ. Նազարեանց

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

Մի ԳԵՐՄԱՆՈՒՀԻ տիկին, ՎԻԵՆՆԱՑԻՑ եկած, միջին հասակի, կը կամենար ՈՒՍՈՒՑՉՈՒՀՈՒ կամ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒՀՈՒ պաշտօն ունենալ Թիֆլիսի մի լաւ ընտանիքում։ կարող է և ԳԱՒԱՌՆԵՐԸ դնալ։

Հասցէն „ՄՇԱԿԻ“ խմբագրատանը։

7—10

ԹԻՖԼԻՍԻ ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ հրաւիրում է ցանկացողներին հասցնել ՉԱՐԴՎԱԾ ՔԱՐԵՐ 140 կուբ. սաժ. քանակութեամբ հետևեալ փողոցները նորոգելու համար. Ապտէնայա, Նիժնէ-Սադովայա, Ելիզավետինսկայա, Բուլվարնայա, Լազարեվսկայա, Կախետինսկայա և Վօրոնցովսկայա։ Ցանկացողները պէտք է ներկայանան ամուրդին վարչութեան դիւանատան մէջ փետրվարի 1-ին ներկայ տարվայ առաւօտեան 12 ժամին։ Պայմանները և այդ հարցին վերաբերեալ բոլոր թղթերը կարելի է տեսնել ամեն օր վարչութեան դիւանատան մէջ առաւօտեան 10 ժամից մինչև 2-ը։

2—3

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ ԹԷՑԻ ԳՆԵՐԻ ՆՇԱՆԱՒՈՐ ՓՈՔՐԱՑՈՒՄՆ

(MAISON DE CONFIANCE) ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԵՐԷԱ № № 156, 157, 158, 159 և 160.

Համեմատեցէք թէյ

1 ր.	10 կ.	թէյի հետ ամեն տեղ	1 ր. 30 կ.
1 „	20 „	. . . . .	1 „ 60 „
1 „	40 „	. . . . .	1 „ 90 „
1 „	60 „	. . . . .	2 „ 20 „
1 „	80 „	. . . . .	2 „ 50 „
ամենաբաւը	2 ր.	. . . . .	3 „ ——

Մի և նոյն տեղը գործակալութիւն վաճառման շօկոլադի և կակաօ-ֆրայ Էսսենցիայի, Պարմերի բիսկվիտների, Բազրի կոնֆիկների, Շեֆիլդի դանակների, Տուրնեբի գրիչների, Դաուի հրացանների, Վեկլիի ռէվոլվերների, Բարնսբիի թամբերի, Մեկինի ամանների, Կոլմանի կրախմալ և մանանեխ, Շվարցի ալրօճներ և այլն և այլն։

56—100

ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ընդհանուր ժողովի նիստը, խորհրդի մնացեալ երկու անդամները և հինգ փոխանդամներ ընտրելու համար, տեղի կունենայ ամսիս 30-ին, կիրակի օրը, առաւօտեան 11 ժամին, Արծրունու Թատրօնական դահլիճում։

2—3

ՂԱՐԱԲԱՂԻ

ԱՍՏՂԱԳԷՏԸ

ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆ

ՊԼԱՏՕՆ ԶՈՒԲՈՎԻ

ԹԱՐԳՄԱՆԵՑ ՐԱՖՖԻ

Թիֆլիսում գինն է 1 ր. 20 կ.
Թիֆլիսից դուրս . . . 1 ր. 50 կ.

Վաճառվում է

„Մշակի“ խմբագրատանը. „Կենտրոնական գրավաճառանոցում.“ Զաքարիա Գրիգորեանի „Կովկասեան գրավաճառանոցում.“ պ. Շահվերդեանի գրավաճառանոցում. պ. պ. Շահինեանցի և Տէր-Գրիգորեանցի ծխախոտի մագազիններում։

ՐԱՖՖԻ

ԽԱՄՍԱՅԻ

ՄԷԼԻՔՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԳԻՆՆ Է 1 Ր. 50 Կ.

Գիրքը բաղկացած է 467 երեսներից

Թիֆլիսում վաճառվում է՝

„Մշակի“ խմբագրատանը.—„Կենտրոնական գրավաճառանոցում“ Միրիմանովի տանը № № 3 և 4. Պ. Զաքարիայ Գրիգորեանցի „Կովկասեան գրավաճառանոցում“.—Պ. Էնֆիաճեանցի ծխախոտի խանութում.— Պ. Շահինեանցի ծխախոտի խանութում։

Օտարաքաղաքացիք կարող են դիմել կամ յիշեալ տեղերը, կամ ուղղակի հեղինակին հետևեալ հասցէով։

ТИФЛИСЪ. Редакція „Мшакъ“.

РАФФИ.

ԵՐԿԱԹԷ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՀՃԱԿԱԼՆԵՐ



Մի հոգու համար 8 բուբլուց, երկու հոգու համար 14 ր., մահիճներ ծովային խոտով լցված 6—9 ր. **ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ**։ Նոյն տեղը մեծ քանակութեամբ ԱՄԱՆՆԵՐ, դանակներ պատառաքաղներով, երկաթէ ԳՐԻՉՆԵՐ, կողպէքներ, թիեր, տաղամարդկերանց և կանանց ԹԱՄԲԵՐ, մատուցարաններ, ԿԼՕՆԿԱ, ռէվոլվերներ, ՀՐԱՑԱՆՆԵՐ, ալրօճներ, կոնֆետներ, ԹԷՑ 1-ին հունձի և այլն 25% աւելի լաւ և էժան քան թէ ուրիշ տեղ։

21—100

ԳԱԼԵՐԵԱ ԱՐԾՐՈՒՆԻ, ԴՎՕՐՑՕՎԱՑԱ ՓՈՂՈՑ
ՊԱՀԵՍՏ ԵՒՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ № 144.

СКЛАДЪ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

№ 144, ГАЛЛЕРЕЯ АРЦРУНИ

Ծախվում են. մեծ քանակութեամբ և խիստ էժան, Վիէննայի ԹՈՆԷԹ ֆաբրիկայի ՄԷԲԷԼԻ ամեն տեսակ, նոյնպէս ՈՍԿԵԶՕԾ ՇՐՋԱՆԱԿՆԵՐ հայելիների համար և ՀԱՅԵԼԻՆԵՐ, լուսանկարների համար ԱԼԲՈՒՄԻ թուղթ, Բէլգիայի ԱՊԱԿԻՆԵՐ պատուհանների համար, ամեն տեսակի, նոյնպէս ՄԱՐՄԱՐԻՕՆ քար, ԹՈՒՉԵԱՑ ԱՄԱՆՆԵՐ էմայլով, ՆԻԹՐԱԹ ԴԱՐԺԱՆ, ՈՍԿԻ և ուրիշ շատ տպրանքներ։

ՎԻԷՆՆԱՅՈՒՄ ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ։

„Ժուրնալ դ'Օրիան“ դադարեցրած թերթի տեղ է հրատարակվում այդ նոր լրագիրը։ „L'Oriental“ թերթի տարեկան գինը 8 բուբլ է, կէս տարվանը 4 բուբլ։

Գրվել կարելի է „ՄՇԱԿԻ“ խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէննայում դիմելով հետևեալ հասարակ հասցէով. Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt

Дозволено цензурою, Тифлисъ, 28 Января 1883 года. Типогр. Главн. Упр. Главнонач. гражд. час., Лор.-Мелик. ул. каз. д.